# Աննա Դավթյան

## Հեղափոխություն

– Ռոլանդն եկավ թե՝ բարեւ ձեզ: Սաղ գեղին էլի իրանով էր արել, որին խաշլամա, որին երկու լավաշի փող, մնացել էի ես:

– Ախր, Վարդգես ջան, տեսնո՞ւմ ես, ինչի՞ գնացիք էլի իրան ընտրեցիք, Նիկոլն ի՞նչ անի էս դեպքում:

– Ռազ, գյուղի որոշածն էր, Ռոլանդին էս գյուղն էլ է շատ: Իսկը իրար հարմար են: Եկավ իմ մոտ, ասի՝ սաղին որ հարմար է, ախպեր, գնա, ես քու դեմն առնողը չեմ: Գնա, դառի:

– Ախր հիմա փոխվել ա, կյանքն անհատական ա, Վարդգես ջան:

– Ռազ, ի՞նչ անհատական, մարդ ո՞ւր ա, որ… Ֆոռբի հարսին շունը գզել էր: Վարդգեեեեե՛ս, բոռալով եկան՝ թե հասի: Ասի՝ Ավ ջան, զինվի: Բահն առանք, գնացինք, որ ի՞նչ: Շունը խոզի գոճիներին կերել, հետո հասել էր հարսի վրա: Գզել, քցել էր դռան շեմին: Հիմի էլ պերեվազկի եմ տանում Արթիկ, բերում:

– Ռազ ախպեր, հլը արի մեր մայլեն, մարդ չկա, գյուղապետին պտի դիմենք, որ ուրիշ մայլից մարդ ղրգե:

– Հրաչ ջան, ախր էդքան գնում են երկրից, ի՞նչ կա էդ դրսերում: Դրսի կյանքն էլ իրա բարդություններն ունի:

– Ռազ, դու Երեւան, մենք՝ ստեղ: Դու խաբար չես: Ձմեռն առավոտները ընդամենը հինգ պաչկա հաց էի տանում Արթիկի սուպերմարկետ, որ ծախվի: Տասը րոպե ուշացնեի, էլ չէր վերցնի: Իսկ ավտոյի ակերը՝ քյաչալ, դուրսը՝ գալալյոդ: Էլ տոռոս եմ քաշել ակերին, էլ քյանդր, էլ քեչա, մխերով-բանով, էլի չէր քշվի էդ սառույցին: Օֆելյային ասում էի՝ աղջի դու մի արի, մի բան լինի, գոնե դու մնաս երեխեքի գլխին:

– Սպեց ժնջիլը քանի՞ս է, Վարդգես ջան, մի հատ առնեիր, գցեիր տակը:

– Ռազ, ես գրտնակը տաշելուց, աչքերս բռնվել էր, տունը հազար դրամ չկար, որ երեխեն իջներ, դեքսամետազոն բերեր: Հրաչենց տունը ժամկետն անցածմ կար, դրա հետեւից ղրգեցի, էդ էի կաթացնում:

– Ռազ ախպեր, ստեղ ով ապրի, կարա ջունգլիներում էլ ապրի, անապատում էլ, սիբիր էլ:

– Այ ախպեր ջան, մեր հոր տունն էս է:

– Դե դու արի, ապրի: Ես գամ Երեւան, դու Դավոյի հետ արի գյուղ: Արեք ձեր հոր տունը պահեք:

– Ախպեր, բա ի՞նչ անենք, դուռը փակենք, գնա՞նք:

– Ինչի՞ չգնանք, որ մուխը չմարի՞: Սկի մուխ էլ չկա տների վրա:

– Աշակերտներիցս մեկը գրել էր՝ ես մի կախարդ տեսա, որ իմ ներսի բանտում էր:

– Բա եկեղեցի՞ն: Տուրիստներ չի բերո՞ւմ:

– Եկեղեցին ի՞նչ: Խալիները փռել են, տերտերները վրայով գնում-գալիս են: Էլ էն եկեղեցին չէ: Կուսակրոն Տեր Հունանն էլ ինչ Ենջիկի հետ երեխա ունեցավ, գեղացիք դրին, մորուքը կտրեցին, հիմա եկեղեցուց ելել, դպրոցում աշխարհագրության դասատու է աշխատում:

– Ես ձեր տեղը լինեի, մի իրեք հարուր հատ նապաստակ, հորթուկ, ոչխար, հավ կպահեի, ֆերմա կդնեի: Գոմը կա, բանը կա:

– Ռազ, հավն առնում ես, հավկիթը ոռեն կչոռա, հասցրիր ստեղ, կդառնա կուռկուռ, վերջ, էլ չի ածե:

– Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հիացավ,

Պարեց Սասունն, ու ողջ աշխարհը հասկացավ,

Որ պար չէ սա, այլ մի երկրի հին պատմություն…

– Ավո, գնա կուխնին սորվի:

– Հանդեսի եմ, պա:

– Էս չոլի մեջ ի՞նչ հանդես:

– Նահապետավանի հետ հանդեսի մրցում է:

– Վարդգես ջան, Կոնդը հավ չի՞ պահե:

– Օֆելյա, Կոնդի իսկական անունն ի՞նչ էր:

– Հոկուլը լավ գիտեր, Ան, չեմ հիշում:

– Կոնդը լավ հավ մորթող է, կանչեցի, մորթեց, պրծանք: Վրեքը պծեղմ միս չկար:

– Ռազ ախպեր, Վձոյից լավ մալ պահող չեղնի: Էնքան էր սիրում, մալի հետ գոմն էր քնում, կոտոշները շուշաթղթում էր: Ինչ եղավ վերջում. մնացել էր թրիքը, էդ էլ ծախեց, գնաց Երեւան:

– Հոկուլը Վձոյին միշտ Վազգեն էր ասում:

– Հա, Վազգենը: Գոմի հոտի վրա՝ վարդի յուղ:

– Վձոն էքսպերտ էր, դաժե Վձոն չկարացավ մալ պահե: Գալիս էր, խոտ էինք ծախում, նայում էր գույնին, տեսքին, դնում էր բերանը, ծամում էր, ասում էր՝ չնեղանաք, լավ խոտ չէ: Այ էդ Վձոն անհետ կորավ գյուղից:

– Թիփին որ ութ ամիս վոռա… Վերեն նենց կիջնի, կասես՝ տունս տարավ: Սարը քամով կիջնի…

– Հրաչ ջան, Աշոտը ո՞նց արեց: Հո չեմ ասում՝ դուք պահեք: Դուք ստեղծեք, աշխատատեղեր բացեք, դուք ղեկավարեք:

– Նախ Աշոտինը այգի է, մալ չէ: Հետո տաք է Արզնի, Շիրակը չէ: Ռազ, դու քո ձեռքով պտի անես, թե չէ վարի կտան: Դռաբիլկեն չդրի՞նք: Մուխաննաթ Մակիչն եկավ, թեւը կոխեց մեջը, լոճեց: Միլիցեքի դուռն հասանք: Աշոտ որ ասում ես, Աշոտի հեր Ռոբերտը խնձոր քաղողներին ասում էր՝ խնձորն առանց պտտելու քաղեցիր, էլ մյուս տարի չի աճի: Սխալ ես քաղում, էլ գործի չգաս, տգետ: Մանկապարտեզի վարիչ էր վախտին:

– Ռազ ախպեր, ասում ես՝ ոչխար: Ոչխարը Հոկտեմբերյանի փուշը կուտե, բայց հասավ մեր մոտ, գետին է, ի՞նչ ուտե: Տիզ կընկնի, կսատկի:

– Ռազ հոպար, հլը ֆոա ու նայի էդ սարին:

– Ընի ջան, էդ սարն է կերակրողը:

– Ռազ, ստեղ անոմալիա է, կլիմա չէ: Ստեղ ամենադիշովի կյանքի համար վճարում ես ամենաթանկ գինը:

– Ինչքա՞ն կվառեք ձմեռը, Վարդգես ջան:

– Յոթանասուն հազարի: Սաղ ամառ հավաքում եմ, որ ձմեռը գազի փող տամ: Եռաֆազի համար էլ դիմում գրեցի, նախարարությունից թուղթն եկավ: Ամբողջ էջին գրած էր իմ անունը, վերջում՝ Հարությունյան Արտակ: Ես ձեր տիրու նանը: Էլի առա, իջա Արթիկ: Հիմա սաղ ինստանցիաներով նորից հետ են ուղարկել, որ անունը փոխեն: Ընդամենը մի թղթի համար ութ անգամ Արթիկ իջի, ել:

– Հոպար, ասում եմ՝ ձմեռվա վառելիքի փողով Երեւանում սեփական տուն կվարձես, հացի արտադրությունդ ու գործիքներդ կտեղափոխես, կաշխատես, ավելի լավ կլնի:

– Ընի ջան, սպասեմ: Տոլյատիից գրտնակ են պատվիրել: Սկայպով զանգեց: Տեսել էր լիստով, շշմել էր, հիմա ամբողջ հոսքագիծն է ուզում՝ խմորը կտրող, գնդող, գրտնակող լինյա:

– Որտե՞ղ ես էդ սովորել, ո՞նց ես հավաքում էդ գրտնակը:

– Տո, այ Ընի ջան, ինձուինձ բեջարում եմ: Ինչքան հին երկաթ կար, տաշեցի, սարքեցի: Բայց մաս չի ճարվում: Ցեպը Երեւան վեց հարյուր դրամ է, հասնում է ստեղ, դառնում է երկու հազար: Էլ վալ, էլ շկիվ, կառդան, ռեդուկտոը ժիգուլու ռեդուկտո է, ռեզբավոյ վինտ, մատոռ, ռեմեն, սաղ մասերի համար կողքի գյուղերով ֆոռում եմ, որ ճարեմ: Մինչեւ մասերը հավաքում եմ, պատվիրատուն հոգնում է սպասելուց:

– Է՛, ախպեր ջան, տենց բիզնես կլնի՞:

– Ի՞նչ անեմ, Ռազ, էդ է ունեցածս: Չեմ կարա տամ-առնեմ: Երեկ սվառկա արեցի, էլ բոլտը մեջը չէր հագնում: Ութի բոլտը ինոով կծակվի, էդ մեկ միլիմետրը մինչեւ վերջ կձգվի, էլ էդ բոլտին նա խույ ձեռք չպտի տաս: Սվառկից հետո տեղահան եղավ: Սաղ դրի քանդի, պոչը ջարդավ, ոնց որ կովը սատկավ: Կվալդով տվի, սաղ ջարդի: Դու մի ասա՝ Սյուզիս դուրսը նստած լսում է՝ ոնց եմ քֆրտում:

– Բա, Վարդգես ջան, լյուբոյ մետաղ լարման մեջ է սվառկի ժամանակ: Տոչկեքով պետք ա բռնես:

– Գիտեմ, Ռազ, գիտեմ: Էն է՝ Հրաչն էլ խլուրդի սարքն է խոդի տվել:

– Հա՛, Ռազ ախպեր, խլուրդին՝ որպես դասակարգ վերացրել եմ: Դավոս եկավ, տեսավ, շշմավ:

– Հոպար, ձեւ չկա՞ չսատկացնելու, ուղղակի քշելու բոստանից:

– Չէ, Ընի ջան, էլի հետ կգա:

– Էս երկիրը պետք ա ընդեղ հասած լիներ, որ քեզ տուգանեին կենդանիներ վերացնելու համար:

– Երկիրը թող գա, խլուրդը արտիցս հանե: Ընի ջան, կանգնած ես, չէ՞, մեկ էլ կնայես՝ գազարի պոչը գըրընաց, տարավ գետնի տակ: Հերթով կտանի: Գազարը, սխտորը, կարտոլը: Էս կոշկոռեքի մեջ յանի բան կաճի, էն էլ խլուրդը կտանի: Աղեղը սարքել եմ, լարած դնում եմ բնի բերանին, հենց բարձրանում է, կպնում է լարին, շրխկ, գլուխը ջնջխում է:

– Մի պատմի:

– Առաջ ծակի մեջ շլանգով ջուր էինք կապում, ելնում էր քոռ-քոռ, ընկնում էր արտի երեսը: Դավոս բահով էնքան էր տալիս, մինչեւ արնոտ բրդի պես մնում էր արտի երեսին:

– Բա, Ընի ջան, հոպարներդ հողերը կճանկոտեն ապրելու համար: Ի՞նչ անեմ, ես երեք երեխա ունեմ թառին հանելու:

– Իմացե՞լ ես Ավոյիս բիզնեսը: Ալի էքսպրեսով ճանճ բռնող ծաղիկի սերմեր է պատվիրել: Ավո, հլը բեր: Տո, Ընի ջան, եկել են սերմերը, հահահա: Բերել-տնկել է, աճել են: Ծաղիկը կաճի, բերանը փշերով կբանա, ճանճը կմտնի մեջը, հոպ, կլուց: Ավո, հլը բեր:

– էս ինչ մանր են: Բայց ձեր կլիմային կդիմանա՞ն:

– Նայենք, մենք Ռոբիզոնն ենք՝ պոռոստը ցուրտ տեղ, բամբուկ չկա, այծ չկա, չուտել այծի միս, վաբշե չուտել միս:

– Ընի ջան, ջուր բերե՞մ, խմես:

– Վայ, հոպար ջան, ուրեմն դո՞ւ պետք ա ինձ ջուր բերես:

– Գիտե՞ս Աղվանը զանգել ինչ էր ասում:

– Ի՞նչ:

– Ասում էր՝ Վարդգես ջան, երեխեքս աբխազերեն ոտանավորներ են արտասանում, էս է մեր կյանքը, բայց գալ չեմ կարա, գամ էդ սարի գլխին, ինչո՞վ ապրեմ: Հլը նայե, հլը նայե սարին: Նայե լուսամուտից ոնց վրա կքշե:

– Մի վերմակ, իրեք ադեալ, Ընի ջան, բայց մեկ է՝ էնքան ցուրտ է, չես քնի:

– Երկու ամիս ամառ ու վերջ: Օգոստոսի վերջ ձունը կդնե, մի խնդա, ու ճկճկան մառոզ՝ ութ ամիս: Լեդակոլները սեւեռ ո՞նց կերթան, այ տենց է մեր կյանքը:

– Մի բան պետք ա մտածվի, ախպերներ ջան:

– Ռազ, չենք կարա ոռներս ճղենք, դազի հավկիթ ածենք: Էս է: Լավաշ ծախելով օրական երկու կոպեկ: Ու մի քանի ամիսը մեկ էլեկտրական գրտնակ ծախել: Էս վերջին մոդելից, որ սարքել եմ, մի հատ Սառնաղբյուրում կա: Գնանք, տես: Լիստով դրել եմ:

– Մենակ ցուրտը չէ, հոգեբանությունդ…

– Ստեղ հանուն չկա…

– Ստեղ նավթ գտնելն է ելքը:

– Օֆելյա, իմացա՞ր աղվեսը Մարինի չորս հավը տարել է:

– Որձ հորթիկ է պետք, Վարդգես ջան, որձ հորթիկ:

– Սխալ է էս տեղը երկրի վրա, ինչ-որ սխալ կա, չգիտեմ: Սենց տեղ չէր կարա գոյություն ունենար: Աշակերտդ ոնց էր ասո՞ւմ՝ կախարդական մի բա՞ն:

– Ես մի կախարդ տեսա…

– Տարիքներդ հաշվի առեք, առողջություններդ հաշվի առեք:

– Կախարդ տեսա…

– Օֆելյա, կոֆեն ելավ:

– Վա՛յ: